

## ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

### ՀԱՅԱՐՓԻ ԱՂԱԽԱՆՅԱՆ

Պատմական գրեթե բոլոր ժամանակաշրջաններում Հայաստանը մշտապես ներառված է եղել համաշխարհային առևտրահարաբերություններում, ինչն էլ նպաստել է հայ վաճառական դասի աստիճանական ձևավորմանը: Բայց պատմական տարբեր ժամանակաշրջաններում վաճառականների ու նրանց գործունեության նկատմամբ վերաբերմունքը տարբեր դրսևորումներ է ստացել: Վերլուծելով հասարակական գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունների գործընթացները՝ Հր. Ղ. Միրզոյանը ցույց է տալիս, թե ինչպես է առևտրական դասի հասարակական դերի մեծացման հետևանքով փոխվում նաև այդ դասի հանդեպ եղած վերաբերմունքը<sup>1</sup>: Միջնադարում, օրինակ, առևտուրը, որպես աշխատանքի հասարակական ձև, ըստ էության արհամարհված էր, և վաճառականությունն իր կենսակերպով ու գործելակերպով սկզբնական շրջանում «մերժվել է ֆեոդալիզմի նույնիսկ ամենաառաջավոր գաղափարախոսների կողմից»<sup>2</sup>: Բացասական այսպիսի տրամադրվածությունն արտացոլվել է նաև այդ ժամանակի խոշորագույն մտավորականներից մեկի՝ Գրիգոր Տաթևացու խորհրդածություններում: Այսպես, Տաթևացին աշխատանքի հասարակական բաժանում է կատարում՝ ըստ բարին կամ չարը հետապնդող նպատակների առանձնացնելով չորս խումբ: Երկրագործությունը նա համարում է բարի, վաշխառությունը՝ չար աշխատանք, դարբինների արհեստի մեջ, ըստ նրա, բարին գերակշռում է չարին, իսկ վաճառականության մեջ չարը գերակշռում է բարուն, «զի Վաճառն՝ բազում սուտ լինի և երդումն և զրկումն ի ճարտարութենէ և յագահութենէ»<sup>3</sup>: Տաթևացուց հետո վաճառական դասի վերաբերյալ բացասական պատկերացումներն ընդհանուր առմամբ պահպանվում են՝ ուղղակի որակական նոր բնութագրիչներով: Գր. Դարանաղցին, օրինակ, քննադատում է վաճառականության վարքուբարքը՝ պատմելով Մեծ պահքի շրջանում Ակն քաղաքում իջևանած ջուղայեցի վաճառականների մասին, որոնք կերուխումով, հարբեցողությամբ ու աշխարհիկ երգերով լուծել էին Պահքը՝ ավանդապահ ժողովրդի շրջանում տարակուսանքի տեղիք տալով<sup>4</sup>: Սակայն ապրանքադրամային հարաբերությունների կայունացման, առևտրական դասի գործունեության ընդլայնման ու վաճառականության հասարակական դերի մեծացման գործընթացները նպաստում են, որպեսզի 17-րդ դարավերջին փոխվի նաև այդ դասի վերաբերյալ գնահատականը՝ վերածվելով իր հակադրությանը: Հայ գիտական-փիլիսոփայական մտքի երախտավորներից շատերը՝ ի դեմս Հովհ. Անկյուրացու, Ոս-

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Հր. Ղ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 47-52:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>3</sup> Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 112:

<sup>4</sup> Տե՛ս Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 460-461:

կան Երևանցու, Մատթեոս ու Ղուկաս Վանանդեցիների, Կոստանդ Ջուղայեցու և այլոց, ոչ միայն ամեն կերպ սատարում են առևտրականներին՝ նրանց հաղորդակից դարձնելով եվրոպական գիտության նվաճումներին, այլև սկսում են զովաբանել նրանց գործունեությունը: Այսպես, 1696 թ. Ամստերդամում Ղուկաս և Մատթեոս Վանանդեցիների ջանքերով տպագրված «Բանալի համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի» աշխատության «Առ հայկասեռ ընթերցողս» առաջաբանում կարդում ենք. «Եկեղեցականաց, ոչ քնափից՝ ասեմ, ոչ թուլամտից՝ կամ, ուսումնատէից. այլ՝ քաջամտաց, ուսումնասիրաց՝ արթուն և զուարթուն արանց, որքան օգտակար, և ձեռնտու իցէ՝ ծանօթութիւն այսր ազնուականի գիտութեան՝ վասն դիտաւորութեան սուրբ, և արտաքին գրոց, նոցին ինքեանց ուշիմութեանն թողցուք՝ դատել՝ և դարակել: Բայց՝ ևս քան զևս՝ առաւելապէս պիտանանայ վաճառականաց՝ մանաւանդ հայկազարմից, որք ի մէջ Ասիական՝ և Արևելական ազգաց այսու զոնեա անուամբ փառաւորք՝ և հնարագէտք երկին, զի՝ յամենայն ազգաց ընդունելիք, և յոչ սակաւուց սիրելիք. ընդ ամենայն աշխարհի զանքոյթ երթեկութիւն ունելով՝ զամենայն երկիր առ ոտն հարելով հաճախին»<sup>5</sup>:

Իսկ «զամենայն երկիր առ ոտն հարելով» հաճախելով և շատ ազգերի կողմից ջերմ ընդունելություն գտնելով՝ հայ վաճառականությունը ծանոթանում էր տարբեր ժողովուրդների նիստուկացին, բարքերին, ինչպես նաև գիտական նորագույն նվաճումներին, ավելին, ինքն էլ այդ ամենի ազդեցությամբ փոխվում էր գաղափարապես: Վերադառնալով հայրենիք՝ վաճառականությունն իր վարքուբարքով համապատասխան փոփոխությունների էր ենթարկում մարդկանց կենցաղը, առօրեական մտածողությունն առհասարակ<sup>6</sup>: Ծանոթանալով տարբեր երկրներում գիտության նորագույն նվաճումներին՝ վաճառականությունն այդ ամենը փորձում էր տեղափոխել հայկական միջավայր, ինչի վառ արտահայտությունը հայալեզու տպարանների ստեղծման և գրքերի տպագրության գործին նրանց ցուցաբերած մեծ աջակցությունն էր<sup>7</sup>: Հայ մշակույթի պատմության վերաբերյալ գրականության<sup>8</sup> ուսումնասիրությունից պարզվում է, սակայն, որ վերը նշված ոլորտներով չէր սպառվում հայ վաճառականների գործու-

<sup>5</sup> «Բանալի համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի շարադրեցեալ ի Ղուկասէ ապաշնորի ջախընկալէ Վանանդեցոյ, շարաբարդութեամբ քաջ դարի՝ տեառն Մատթեոսի ներհուն տպագրի հայոց», յԱմստելոյան, 1696, էջ 1-3:

<sup>6</sup> Այդ մասին տես, օրինակ, **Յ. Յ. Աղախանյան**, Հայ վաճառականության դերը ժողովուրդների շփման ու փոխհարստացման գործում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2008, թիվ 1, էջ 176-185, **Մույնի**՝ Հայ վաճառականության դերը առօրեական մտածողության զարգացման գործում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, թիվ 2, էջ 108-121:

<sup>7</sup> Այդ մասին տես, օրինակ, **Յ. Յ. Աղախանյան**, Հայ վաճառականության տպագրական գործունեության վերագնահատության փորձ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2008, թիվ 3, էջ 67-76:

<sup>8</sup> Տես, օրինակ, **Յ. Ա. Գևորգյան**, Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ, Եր., 2005, **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992, **Յ. Հակոբյան**, **Է. Կորիմազյան**, Հայկական մանրանկարչություն, Եր., 1987, «Հայկական մանրանկարչություն», Դիմանկար (առաջաբ. և ծանոթագր.՝ Աստղիկ Գևորգյանի), Եր., 1982, **Մ. Ղազարյան**, Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Եր., 1974, **Կ. Ղաֆադարյան**, Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Եր., 1975, **Ս. Ե. Մարտիրոսյան**, Հայկական կերպարվեստի պատմություն, Գիրք Ա, XVII-XIX, Եր., 1971, **Գ. Մելքունյան**, Մշակութաբանություն, Եր., 2001, **Յր. Գ. Շաքարյան**, Փիլիսոփայությունը ստեղծագործության գաղտնիքների որոնումներում, Եր., 2002, **Ս. Ա. Սարգսյան**, Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Եր., 2004, **Carswell J.** New Julfa, Oxford, 1968 և այլն:

նեությունը: Գրքերի տպագրությունից զատ հայ վաճառականները դարձել են նաև մշակույթի գործերի պատվիրատու, կրող ու տարածող՝ կարևոր դերակատարություն ունենալով նաև հայ մշակույթի զարգացման գործում:

Բանն այն է, որ ինչպես պատմական բոլոր ժամանակաշրջաններում, 17-18-րդ դարերում ևս ստեղծվում է մի յուրահատուկ «ոգեղենության մթնոլորտ»<sup>9</sup> (атмосфера духовности), որն ըստ էության գերիշխող հասարակական արժեքների խտացումն էր և որտեղ մշակույթի կառուցվածքային բոլոր տարրերը ներքուստ շաղկապված էին միմյանց հետ: Այսպես, օրինակ, աշխարհիկ ու հոգևոր շինարարական արվեստը, ճարտարապետությունը կապված էին ժամանակի մատենագրության ու մանրանկարչության, կենցաղի ու բարքերի հետ՝ կազմելով «տվյալ դարաշրջանի մշակույթի սինխրոնիկ ամբողջականությունը»<sup>10</sup>: Եվ քանի որ հայ վաճառականության գործունեության շնորհիվ որոշակի փոփոխություններ էին սկսել տեղի ունենալ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, ապա, ելնելով հասարակական կյանքի տարբեր ոլորտների փոխկապվածության սկզբունքից, նրանց գործունեությունն անխուսափելիորեն պետք է դրսևորվեր նաև մշակույթի տարբեր բնագավառներում:

Այժմ փորձենք տեսնել, թե ինչ դերակատարություն են ունեցել հայ վաճառականներն այդ «ոգեղենության մթնոլորտի» ստեղծման, «մշակույթի սինխրոնիկ ամբողջականության» ապահովման և առհասարակ հայ մշակույթի զարգացման գործընթացներում: Այսպես, առևտրական հարաբերություններ հաստատելով Եվրոպայի, Ասիայի կարևորագույն պետությունների, ինչպես նաև Ռուսաստանի հետ՝ առևտրական իրենց ճանապարհորդությունների ընթացքում հայ վաճառականները շփվում, ծանոթանում էին այդ երկրների ձեռքբերումներին՝ անխուսափելիորեն ենթարկվելով մշակութային տարբեր ուղղությունների ազդեցությանը: Բայց քանի որ մշակույթի բնագավառը չափազանց լայն է ու ընդգրկուն, ուստի սույն հոդվածում կանդրադառնանք միայն ճարտարապետության ու գեղանկարչության զարգացման գործընթացում վաճառականության ունեցած դերակատարությանը:

Հայտնի է, որ 17-րդ դարասկզբին Հայաստանի մի շարք քաղաքներում ու քաղաքատիպ վայրերում, որոնք առևտրական բանուկ ճանապարհներին մոտ էին գտնվում, արհեստագործության ու առևտրի որոշակի աշխուժացում է նկատվում: Տնտեսական կյանքի աշխուժացումն իր հերթին նպաստում է քաղաքների ու վանքային միաբանությունների դանդաղ վերելքին, որն էլ ուղեկցվում է շինարարական աշխատանքների վերակենդանացմամբ<sup>11</sup>: 17-18-րդ դարերում վերաշինված կամ կառուցված եկեղեցիների, մենաստան-ամապատների ու վանքապատկան այլ շինությունների արձանագրությունների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ շինարարական այդ աշխատանքներին մեծապես աջակցել են նաև հայ

<sup>9</sup> Шпенглер О. Закат Европы. Ују աշխատությունն օգտագործել ենք էլեկտրոնային տարբերակով "Философия от античности до современности". "Электронная библиотека". М., 2003, ուր գետեղված է Շպենգլերի աշխատության հետևյալ հրատարակությունը. Шпенглер О. Закат Европы. Новосибирск, 1993:

<sup>10</sup> Հ. Ա. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 387:

<sup>11</sup> Այդ մասին տես, օրինակ, Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 374-462, նույնի՝ Հայկական քաղաքաշինության և ճարտարապետության տեսության ու պատմության հիմնախնդիրներ (աշխատությունների և հոդվածների ժողովածու), Եր., 2004:

վաճառականները<sup>12</sup>: Հայ վաճառականների հովանավորությամբ եկեղեցիների կառուցման կամ վերանորոգման մասին վկայող բազմաթիվ դեպքերից առանձնացնենք միայն մի քանիսը: Օրինակ, Փիլիպոս կաթողիկոսի հրամանով 1643 թ. Ջուղայեցի խոջա Պետրոսի միջոցներով վերանորոգվում է Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու տանիքը<sup>13</sup>, 1652 թ. Փիլիպոս կաթողիկոսը մեկնում է Կ. Պոլիս, հանդիպում թուրքահպատակ մեծահարուստ հայ Անտոն Չելեպիին և «ստանում նրա հոժար համաձայնությունը՝ լինելու մեկենասը Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան շինարարության»<sup>14</sup>, 1655-1656 թթ. Ջուղայեցի վաճառական Մահտեսի Հակոբի նվիրատվությամբ կառուցվում է Շատիհի վանքը<sup>15</sup>, Ագուլեցի խոջա Շնավոնի միջոցներով 1662 թ. ավարտվում են Խոր Վիրապի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու հիմնովին վերակառուցման և պարիսպների կառուցման աշխատանքները<sup>16</sup>, 1666 թ. Սիսիանի Լոր գյուղում խոջա Պետրոսը կառուցել է տալիս եկեղեցի, որի մուտքը գեղազարդված է բարոկկոյի ոճով կատարված զարդաքանդակներով, ինչը խոսում է հայ մշակույթի վրա արևմտաեվրոպական մշակույթի ունեցած ազդեցության մասին<sup>17</sup>: 1691-1705 թթ. մեծահարուստ խոջա Փանոսի միջոցներով կառուցվում է Հին Երևանի հյուսիսային կողմի այգիներում գտնվող Ջորավոր եկեղեցին<sup>18</sup>: 1714 թ. շոռթեցի խոջա Այվազի միջոցներով նորոգվում է Ջուղայի շրջանի Աբրակունիս գյուղաքաղաքում Ս. Կարապետ վանքին կից Ս. Ստեփանոսի մատուռը<sup>19</sup>, 1720 թ. Գողթեցի մահտեսի Բենիամինի և իր որդի Ազարիայի միջոցներով նորոգվում է Շինուհայրում գտնվող կուսանաց անապատի Ս. Աստվածածին եկեղեցու բեմի հարավային որմնասյունը<sup>20</sup>, 1790 թ. Դուկաս կաթողիկոսի օրոք Ջուղայեցի մեծահարուստ Խաչիկ Վնթմյանի միջոցներով կառուցվում է Հռիփսիմեի տաճարի զանգակատունը<sup>21</sup> և այլն:

Այսքանով, իհարկե, չեն սպառվում Հայաստանում հայ վաճառականների հովանավորությամբ կատարված շինարարական ու բարեփոխման աշխատանքները: Բայց քանի որ 17-18-րդ դարերում հայ վաճառականությունն առավել ակտիվ գործունեություն էր ծավալում հատկապես մայր հայրենիքի սահմաններից դուրս, ուստի նրանց հովանավորությամբ ստեղծված և ճարտարապետության ավելի կատարելագործված ու առավել գեղեցիկ նմուշներ մենք տեսնում ենք հայկական ծաղկուն գաղթօջախներում, մասնավորապես Նոր Ջուղայում, Կ. Պոլսում, Լվովում: Այս-

<sup>12</sup> Տե՛ս, օրինակ, **Կ. Ղաֆաղարյան**, նշվ. աշխ., **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, **Ս. Գեջյան**, Հայկական ճարտարապետություն, Մատենագիտություն, հատոր առաջին, Հնագույն շրջանից մինչև 1920 թ., Եր., 1997:

<sup>13</sup> Տե՛ս **Առաքել Ղալիփեցի**, Գիրք Պատմութեանց (աշխատասիրությամբ՝ Լ. Ա. Խանլարյանի), Եր., 1990, էջ 285:

<sup>14</sup> **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 383:

<sup>15</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Եր., 1972, հ. 4, էջ 601, **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 394:

<sup>16</sup> Տե՛ս **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 388:

<sup>17</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 600:

<sup>18</sup> Տե՛ս **Կ. Ղաֆաղարյան**, նշվ. աշխ., էջ 37, **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 380:

<sup>19</sup> **Վ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 413:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 393:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 384:

պես, Նոր Ջուղայի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է խոջա Ավետիսի միջոցներով (1612-1613 թթ.), իսկ հսկայաշեն Բեթղեհեն եկեղեցին՝ Մեյդանի ժամը, կառուցվել է խոջա Պետրոս Վելիջանյանի հովանավորությամբ: Այս եկեղեցիների թե՛ ճարտարապետական լուծումները և թե՛ ներքին հարդարանքը՝ որմնանկարներն ու զարդաքանդակները, կրում են եվրոպական մշակույթի ազդեցությունը: Այդ ազդեցությունն առավել նկատելի է հատկապես աշխարհիկ կառույցների պարագայում<sup>22</sup>: Այստեղ ակնհայտ են մի կողմից պարսկական, մյուս կողմից արևմտաեվրոպական մշակութային ազդեցությունները, որոնք, միախառնվելով հայկական մշակույթի հետ, յուրօրինակ լուծումներ են ստացել: Բայց քանի որ մեր ուսումնասիրության նպատակից դուրս է հայկական ճարտարապետության կոնկրետ ձեռքբերումների, արևելյան կամ եվրոպական արժեքների ազդեցության հարցերի քննարկումը, նշենք միայն, որ 17-18-րդ դարերի հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այդ շրջանի ճարտարապետության զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն են ունեցել նաև հայ վաճառականները ինչպես հայրենիքում, այնպես էլ հայկական առավել ծաղկուն գաղթօջախներում: Շրջելով երկրից երկիր ու ծանոթանալով տարբեր ժողովուրդների մշակույթներին՝ նրանք փորձել են հնարավորինս ընդօրինակել այդ ամենը՝ դառնալով ինչպես եկեղեցաշենքերի, այնպես էլ ճարտարապետական զանազան այլ կառույցների պատվիրատուն ու մեկենասը:

Բնականաբար, հայ վաճառականների ուշադրությունից չեն վրիպել իրենց «եվրոպական գործընկերների» առանձնատները, դրանց ներքին հարդարանքը և, առհասարակ, կահ-կարասին: Ուստի եկեղեցիներից բացի հայ վաճառականները նաև «շինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թևաւոր ապարանօք, և ամարասուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղիկս ոսկւոյ և լաջվարդի՝ և պէս պէս երանգաց ակնախտիղ տեսողաց»<sup>23</sup>: Ամենայն հավանականությամբ հայ վաճառականներն իրենց ճանապարհորդությունների ընթացքում շրջել են նաև եվրոպական երկրների արվեստանոցներում ու պատկերասրահներում, ծանոթացել ժամանակի գեղարվեստին, բացառված չէ, ձեռք բերել նաև դրանցից վաճառքի կամ իրենց համար: Օրինակ, Ստեփանոս Դաշտեցին իր «գրույց-բանավեճերից» մեկում հիշատակում է «ոմն հանճարեղ պատկերահան, որ է վարժե[ա]լ սքանչելի գիտութեամբ արվեստին իբր զՎենեցիանն Նիկոլօ Քաշանա և զԲօմբէլին, որք էինն ի ժամանակի մերում, որ և ունինք զսքանչելի ձեռակերտ սոցին անհամեմատ»<sup>24</sup>: Իսկ սա նշանակում է, որ հայ վաճառականության ուշադրությունից չեն վրիպել նաև այդ ժամանակաշրջանում լայն տարածում գտած աշխարհիկ թեմաներով կտավները՝ ճակատամարտի տեսարաններ, իշխանների ու իշխանուհիների դիմանկարներ, որոնցից շատերն էլ որպես վաճառքի առարկա տեղափոխել են հայրենիք: Օրինակ, «Սպահանի նշանավոր Մայդան շահի խանութն-

<sup>22</sup> Այդ մասին տե՛ս Carswell J. նշվ. աշխ.:

<sup>23</sup> Առաքել Դաւրիժեցի, նշվ. աշխ., էջ 93:

<sup>24</sup> Հր. Ղ. Միրզոյան, Ստեփանոս Դաշտեցու անտիպ «գրույց-բանավեճերը», «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, թիվ 3, էջ 131:

րում հայ առևտրականները վաճառում էին Վենետիկից, Լիվոռնոյից ու Նյուրմբերգից բերված գեղանկարներ ու փորագրություններ»<sup>25</sup>, ինչը չէր կարող անտարբեր թողնել ինչպես սովորական սպառողներին, այնպես էլ արվեստագետներին: Իրենց պատվիրատուների պահանջները բավարարելու համար տեղի արվեստագետները եվրոպական մշակույթից պետք է ընկալեին իրենց արվեստի զարգացմանն այնքան անհրաժեշտ նոր եղանակները, նկարելաձևը, նկարը կառուցելու նորագույն սկզբունքները: Բայց քանի որ հայ վաճառականները շրջում էին նաև Ասիայի երկրներում, ուստի հայոց մշակութային կյանքում ծանրակշիռ տեղ են զբաղեցրել արևելյան արժեքները, ինչն առավել ցայտուն է դրսևորվում մասնավորապես Նոր Ջուղայի մշակութային կյանքում: Գրեթե ծուլված լինելով Սպահանի կենսակերպին՝ հայ վաճառականությունը շատ բան էր ընդօրինակել այդ քաղաքի առևտրական վերնախավից՝ «աշխատելով համընթաց քայլել յեթե վոչ Իրանի շահնշահի պալատի, զոնե պետական բարձր պաշտոնեյության և ազնվականության հետ»<sup>26</sup>: Այս տեսանկյունից հայկական մշակույթը եվրոպականի ձեռքբերումներին զուգակցում էր արևելյան մշակույթին բնորոշ պերճությունն ու դեկորատիվ գունագեղությունը: Այսպիսի համադրությունն էլ իր հերթին ձևավորում էր գեղեցիկի նոր ընկալում: Չէ՞ որ «եվրոպական կենցաղավարության ձգտումը՝ արևելյան ճոխության երանգով, բերում էր իր հետ նոր պահանջներ, նոր ճաշակ, գեղագիտական նոր հասկացություններ»<sup>27</sup>:

Մշակութային տարբեր ուղղությունների այսպիսի երկխոսություններ ամենից առաջ դրսևորվում են անկում ապրող մանրանկարչության ու զարգացման մեծ թափ ստացած գեղանկարչության բնագավառներում:

Չնայած տպագրության զարգացմանը զուգընթաց մանրանկարչությունն աստիճանաբար իր տեղը զիջում էր հաստոցային նկարչությանը, այնուամենայնիվ 17-րդ դարում ստեղծվում են նաև հայկական մանրանկարչության երբեմնի ավանդույթների ոգուն հարազատ աշխատանքներ: Արևմտաեվրոպական մշակույթին բնորոշ աշխարհիկացման միտումներն իրենց արձագանքն են գտնում նաև հայ մանրանկարչության մեջ<sup>28</sup>: Ուշագրավ է հատկապես Նոր Ջուղայի մանրանկարչական դպրոցը, «որի ներկայացուցիչները հայ նկարչության ավանդույթները հարստացրին իրանական ու եվրոպական նկարչության մոտիվներով»<sup>29</sup>: Պատվիրված ձեռագրերում աստիճանաբար սկսում են գերակշռել կրոնական թեմաների աշխարհիկ մեկնաբանությունները և առհասարակ աշխարհիկ թեմաները: Ավելին, այս շրջանում պատկերազարդվում են նաև աշխարհիկ բովանդակությամբ ձեռագրեր, ինչպիսիք են, օրինակ, «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը», պատմագրական մի շարք երկեր<sup>30</sup>: Մյուս կողմից, հարստանալով ժամանակի գեղագիտական նոր սկզբունքներով, 17-րդ դարի հայ մանրանկարչությունն իր հերթին դառնում է հայ հասարակու-

<sup>25</sup> Մ. Ղազարյան, Եզվ. աշխ., էջ 16:

<sup>26</sup> Լեո, Խոջայական կապիտալը յեվ նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Յերեվան, 1934, էջ 78:

<sup>27</sup> Մ. Ղազարյան, Եզվ. աշխ., էջ 15:

<sup>28</sup> Այդ մասին տես, օրինակ, Զ. Չակոբյան, Է. Կորխմազյան, Եզվ. աշխ.:

<sup>29</sup> Գ. Մելքունյան, Եզվ. աշխ., էջ 219:

<sup>30</sup> Այդ մասին տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 585:

թյան որոշակի խավի պահանջումներին ու աշխարհայացքի արտահայտողը: Քանի որ «նախկին բարձրաստիճան իշխանների ու հոգևորականների փոխարեն ձեռագրեր էին պատվիրում մեծահարուստ վաճառականները»<sup>31</sup>, ըստ այդմ նրանք էլ սկսում են թելադրել իրենց կամքը: Իսկ սա չէր կարող չանդրադառնալ մանրանկարչության ընդհանուր բնույթի, թեմատիկայի ընտրության, կերպարների պատկերման սկզբունքների ու եղանակների վրա: Բնականաբար հայ ծաղկողները պետք է կարողանային նաև այնպիսի մանրանկարներ ստեղծել, որոնք կբավարարեին նոր պատվիրատուների գեղագիտական ու առհասարակ աշխարհայացքային պահանջումները:

Օրինակ, 17-րդ դարի մանրանկարչության կարևորագույն ձեռքբերումներից մեկի՝ 1610 թ. կազմված ծաղկազարդ ձեռագիր Ավետարանի պատվիրատուն եղել է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի կառուցման հովանավորը՝ խոջա Ավետիսը: Հիրավի, հայ մանրանկարչության պատմության տեսանկյունից «իր շքեղ ու հարուստ պատկերաշարով այդ ձեռագիրը բացառիկ արժեք է ներկայացնում»<sup>32</sup>: Սակայն, մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից առավել հատկանշական է այն, որ 1610 թ. ձեռագիր Ավետարանում, ի շարս աստվածաշնչյան պատկերների ու կերպարների, տեսնում ենք նաև գրքի պատվիրատու վաճառականի՝ խոջա Ավետիսի դիմանկարը: Պատվիրատու վաճառականի դիմանկարը Ս. Գրքի էջերում հայտնվելու փաստն արդեն խոսում է դարի ոչ միայն գեղագիտական սկզբունքների, այլև առհասարակ մտածողության չափանիշների փոփոխության մասին: Սա մի ժամանակշրջան էր, երբ «աճում էր մարդը, զարգանում և խորանում էր նրա ինքնագիտակցությունը՝ հասարակական գիտակցությունն ամբողջությամբ, զարգանում էր մարդկային աշխարհագրողությունը, կյանքի հանդեպ հասարակական և անհատական հարաբերությունը»<sup>33</sup>: Եթե միջնադարում մարդկային մահկանացու մարմինը համարվում էր մեղքի աղբյուր, նվաստ ու երկրորդային, ապա այժմ ավետարանական կերպարների կողքին պատկերվում է սովորական մեղսավոր մի մահկանացու՝ վաճառական: Մարդ, որի կերպարն այսուհետ դառնում է բարեգործության և մեծահոգության խորհրդանիշ ու չափանիշ: Դառնալով ձեռագիր մատյանների մեկեմասը և տեղ գտնելով այդ մատյանների էջերում, փաստորեն, հայ վաճառականները տարերայնորեն նպաստում էին առհասարակ գիտակցության աշխարհիկացման գործընթացին: Աշխարհիկացման այդ գործընթացներին նպաստում էր նաև այն հանգամանքը, որ հայ վաճառականները ձեռագիր մատյաններ պատվիրելուց ու եկեղեցիների շինության մեկեմասը դառնալուց զատ նաև եկեղեցական որմնանկարներ էին պատվիրում: Ուստի հովանավոր վաճառականների դիմանկարների ենք հանդիպում նաև եկեղեցական որմնանկարչության մեջ: Հայկական շատ եկեղեցիներում աստվածաշնչյան տարբեր պատկերներ մարմնավորվում են պատվիրատու վաճառականների կերպարներով: Այսպես, օրինակ, Ամենափրկիչ վանքի «Ահեղ դատաստանը» որմնակնարում պատկերված է վանքի և որմնանկարների պատվիրատու խոջա Ավետիսը՝ խաչը գրկած, Բեթղեհեմի եկեղեցու «Դրախտի» կոմպոզիցիայում՝ խոջա Պետ-

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 584:

<sup>32</sup> «Հայկական մանրանկարչություն. Դիմանկար», էջ 215:

<sup>33</sup> **Апресян Г.** Из истории армянской эстетической мысли. Кн. 1. Ер., 1973, с. 245.

րոսն է, Աստվածածնի եկեղեցուն՝ «Յովհաննես Մկրտչի գլխատունը» կտավում, պատկերված է Գերաք աղան, «Աստված ու աստվածամայրը» կտավում՝ Գերաք աղան իր երկու որդիների և կնոջ հետ<sup>34</sup>:

Այսքանով, սակայն, չի ավարտվում գեղանկարչության աշխարհիկ-կացման գործընթացը: «XVII-XVIII դարերի հայ գեղանկարչությունը դուրս է գալիս հասարակական վայրերից ու մուտք գործում բնակելի տները, դառնում կենցաղը գեղեցկացնող անհրաժեշտություն»<sup>35</sup>, սկսում է զարգանալ աշխարհիկ սյուժեներով գեղանկարչությունը, մասնավորապես դիմանկարչությունը, «որը կոչված էր բավարարելու հայ առևտրական բուրժուազիայի աշխարհիկ պահանջմունքները»<sup>36</sup>: Այս հանգամանքը ևս պայմանավորված էր հայ վաճառականների՝ եվրոպական երկրներում իրենց տեսած պերճաշուք պալատները և բարձրաշխարհիկ կենսակերպը ընդօրինակելու ձգտմամբ: Ահա թե ինչու հայկական առավել ծաղկուն գաղթօջախներում շուտով սկսում են վեր խոյանալ նմանատիպ պալատներ, որոնք աչքի են ընկնում կահավորանքի պերճությամբ ու որմնանկարների, մասնավորապես դիմանկարների առատությամբ՝ նպաստելով հայ գեղանկարչության դպրոցի զարգացմանն առհասարակ:

Չանդրադառնալով այս ժամանակաշրջանի առանձին գեղանկարիչների ստեղծագործություններին՝ նշենք միայն, որ հայ առևտրականների շքեղ բնակարանների նույնքան շքեղ որմնանկարների հեղինակներից մեզ հայտնի են հատկապես վարպետ Մինասի, Յակոբջանի, Բոգդան Սալթանովի և Յովհաննես Մրքուզ Ջուղայեցու, Նաղաշ Յովնաթանի և այլոց անունները, որոնց վրձնին են պատկանում հայ մեծահարուստ վաճառականներ խոջա Պետրոսի ու Տեր-Բարսեղյանի<sup>37</sup>, խոջա Սաֆրազի և շատ-շատերի առանձնատների որմնանկարները և մեծադիր դիմանկարները: Ինչպես մանրանկարչության ու եկեղեցական որմնանկարչության մեջ, աշխարհիկ գեղանկարչության բնագավառում ևս ակնհայտ են արևելյան ու արևմտյան մշակութային արժեքների ու մոտեցումների յուրօրինակ համադրությունն ու երկխոսությունը: Այսպես, մեծահարուստ հայ վաճառականների ապարանքների որմնանկարներում պատկերված են եղել ինչպես պարսկական իրականությունը մարմնավորող նկարներ, ինչպիսիք են խրախճանքների ու խնջույքների տեսարանները, որոնցում հաճախ պատկերված էր լինում Շահ Աբաս Երկրորդը, այնպես էլ եվրոպական տարբեր տարազներով կանայք ու տղամարդիկ: Այս առնչությամբ հետաքրքիր են նորջուղայեցի մեծահարուստ Ազանուր Տեր-Բարսեղյանի տան նկարագրողումները, որոնք լավ են պահպանվել: Ընդհանուր նկարաշարում, ուր տեղավորված են թվով տասնմեկ նկարներ, գերաշկոռում է պարսկական զարդանկարը, և ամենուր զգացվում է իրանական մանրանկարչության ազդեցությունը: Նկարաշարի կենտրոնում պարսիկ վաճառականի տարազով ու հպարտ կեցվածքով պատկերված է տան նախկին տերը՝ խոջա

<sup>34</sup> Տե՛ս **Մ. Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 31:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 248:

<sup>36</sup> **Յր. Ղ. Միրզոյան**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, էջ 66:

<sup>37</sup> Այդ մասին տե՛ս, օրինակ, **Ա. Երեմեան**, Նորագիտ էջեր Նոր Ջուղայի որմնանկարչութիւնից, «Անահիտ», Փարիզ, 1939, էջ 24-32, **Մ. Ղազարյան**, Նոր Ջուղայի XVII դարի հայ նկարչությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, №1, էջ 194-202:



Սուլթանը՝ «կարծես թե ցույց տալու համար իր ազնվական ծագումը և դրանի կարողությամբ այդ փառքին հասած վիճակը»<sup>38</sup>: Մյուս պատկերների սյուժեները, տարազների ճոխությունն ու գույները ցույց են տալիս հայ վաճառականների անհոգ ու հարուստ ապրելակերպը և պարսից վերնախավին նմանակելու ձգտումը: Նկարներից մեկն էլ կոչվում է «Շահ Աբաս Երկրորդը Նոր Ջուղայում»: այստեղ պատկերված է Շահ Աբաս Երկրորդը, որը ծալապատիկ նստած երաժշտություն է վայելում: Հայտնի է, որ շահերի այցելությունները հայ խոջաներին հազվադեպ չեն եղել, և ամենայն հավանականությամբ խոջա Սուլթանը ևս այդ խոջաների շարքում է եղել: Ուստի հայ վաճառականը շահին սիրաշահելու համար նրան պատկերել է իր ապարանքի պատերին: Բայց քանի որ խոջա Սուլթանը առևտրական գործունեություն է ծավալել նաև եվրոպական երկրներում և իր տանը հյուրընկալել է նաև եվրոպացի գործընկերների, ուստի ապարանքի պատերին հեռատեսրեն պատկերել է տվել նաև եվրոպական մշակույթն արտացոլող սյուժեներ: Այս տեսանկյունից ուշագրավ է մի աշխատանք, որը վերնագրված է «Գեղեցկուհիների աշխարհում», և որտեղ սեղանի շուրջ հավաքված զվարճանում են եվրոպական տարազներով պատկերված մարդիկ:

Եվրոպական մշակույթի ազդեցությունն առավել ցայտուն է երևում հատկապես խոջա Պետրոսենց տան որմնանկարներում, որոնցից, ցավոք, միայն հետքեր են պահպանվել: Որմնանկարներում պատկերված են եվրոպական ու պարսկական տարազներով իշխաններ, կանայք ու նաժիշտներ: Թեև Նոր Ջուղային նվիրված ալբոմի հեղինակ Ջոն Կարսվելը այս աշխատանքներում տեսնում է հատկապես իսպանական գեղանկարչության ազդեցությունը<sup>39</sup>, այնուամենայնիվ արդեն պարսկական տարազների ու առհասարակ պարսկական մանրանկարչության որոշ տարրերի առկայությունը խոսում է հայ մշակույթի զարգացման ընթացքի վրա ոչ միայն եվրոպական, այլև իրանական մշակույթի ունեցած ազդեցության մասին:

Պետք է նշել, որ հայ մշակույթի և մասնավորապես գեղանկարչության զարգացման գործընթացում արևելյան ու արևմտյան կողմնորոշումների ազդեցության գնահատության հարցի շուրջ մասնագետներն ունեն որոշ տարակարծություններ: Լ. Ազարյանի համոզմամբ, օրինակ, «ի վիճակի չլինելով լիովին վերածնել, զարգացնել ազգային մշակույթի ու արվեստի վաղեմի բարձր ավանդույթները, XVII-XVIII դարերի հայ նկարիչները ակամա ենթարկվում էին Արևելքի ու Արևմուտքի ժողովուրդների մշակույթի ազդեցությանը»<sup>40</sup>: Մինչդեռ Մ. Ղազարյանի համոզմամբ՝ հայկական գաղթախմբերից հատկապես Նոր Ջուղայի «XVII դարի արվեստի բազմակողմանիությունը, եվրոպական և արևելյան արվեստների ուժեղ ազդեցությունները բնական են և արդարացված ինչպես նրա աշխարհագրական դիրքով, տնտեսական հետաքրքրություններով, նույնպես և նոր արվեստի ձևավորումից բխող անհրաժեշտությամբ»<sup>41</sup>, քանի որ «հասարակական կյանքի նոր դրվածքը, եվրոպական կենցաղավարության ձգտումը՝ արևել-

<sup>38</sup> Ե. Մարտիկյան, նշվ. աշխ., էջ 20:

<sup>39</sup> Տե՛ս Carswell J. նշվ. աշխ., էջ 67:

<sup>40</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 588:

<sup>41</sup> Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, էջ 49:

յան ճոխության երանգով, բերում են իրենց հետ նոր պահանջներ, նոր ճաշակ, գեղագիտական նոր հասկացողություններ»<sup>42</sup>:

Փորձենք այս հարցը դիտարկել առհասարակ ազգային մշակույթի *ձևավորման* ու *զարգացման* առանձնահատկությունների տեսանկյունից: Տեսնենք, թե ինչպես են տեղի ունենում ազգային մշակույթների ձևավորման գործընթացները, պատմականորեն հնարավոր ինչ զարգացումներ ու ինչպիսի կապեր կարող են ունենալ այլ ազգերի մշակույթների ու ընդհանրապես քաղաքակրթությունների զարգացման հետ: Ազգի, ազգային պետության, ազգային մշակույթի զարգացման առանձնահատկությունները արևմտավրոպական պատմափիլիսոփայական տեսությունների լույսի ներքո քննադատական վերլուծության ենթարկելով՝ Յ. Ա. Գևորգյանը ազգային մշակույթների ձևավորումը կապում է մշակույթի *ազգագրական* շերտի կազմավորման հետ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ ավանդական-սովորութային նորմերն ու արժեքները, որոնց էությունը *իրենց՝ ավանդաբար* վերարտադրվելու կարողությունն է: Ըստ այդմ, ժողովրդի մշակույթի *պատմական* զարգացումը սկսվում է այն ժամանակ, երբ, ցանկանալով մտնել ժամանակակից հասարակական, տնտեսական, մշակութային աշխարհ, սկսում է իրեն ծավալել նորանոր քաղաքակրթական ձևերի և էլիտար մշակույթի մեջ, ունենում զարգացման նոր փուլեր: Ավելին, միայն այս դեպքում է հնարավոր դառնում հավասար երկխոսության մեջ մտնել ուրիշ ժողովուրդների զարգացած մշակույթների հետ: Այս տեսանկյունից ազգային մշակույթի հատկանշական առանձնահատկությունը մշակույթի քաղաքակրթական ձևերի և էլիտար մշակույթի առկայությունն է, որոնք ժողովրդի մշակույթի պատմական զարգացման նոր, բարձր աստիճանն են և մշակույթի միասնականացման առաքելություն են իրականացնում: Որպեսզի մշակույթի քաղաքակրթական ձևերը և էլիտար մշակույթը արմատավորվեն որևէ ժողովրդի կյանքում, դառնան նրա համընդհանրական, հասարակական կեցության եղանակը, հարկավոր է որոշ պատմական ժամանակ: Եվ հարկավոր է, որ այդ ընթացքում ժողովրդի մշակույթը ծավալի իր *սեփական* ներքին հնարավորությունները մշակույթի քաղաքակրթական ձևերի և էլիտար մշակույթի մեջ: Իսկ եթե ժողովրդի մշակույթը իր ներքին հնարավորությունները ծավալել է քաղաքակրթական և էլիտար մշակույթի մեջ, ապա վերջինս իր էական ազդեցությունն է գործում այդ *ժողովրդի* ամբողջ մշակույթի վրա, որակապես ձևափոխում է այն: Ինչ վերաբերում է հայ ժողովրդի, հայ մշակույթի զարգացման պատմությանը, ապա պատմական բոլոր ժամանակաշրջաններում այն կարողացել է իր ներքին հնարավորությունները ծավալել մշակույթի քաղաքակրթական ու էլիտար շերտերում: Ավելին, հենց այս հանգամանքն էլ հնարավոր է դարձրել, որ յուրաքանչյուր պատմական դարաշրջանում հայ մշակույթը հավասար երկխոսության մեջ մտնի ժամանակի զարգացած մյուս մշակույթների հետ<sup>43</sup>:

Ասվածի վառ ապացույցը հատկապես 17-18-րդ դարերի մշակույթն է: Չնայած մշակութային տարբեր ուղղությունների ազդեցությանը, այս շրջանի ինչպես ճարտարապետությունը, այնպես էլ մանրանկարչությունն ու գե-

<sup>42</sup> Մ. Ղազարյան, Նոր Զուղայի XVII դարի հայ նկարչությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, №1, էջ 193-194:

<sup>43</sup> Այդ մասին մանրամասն տես Յ. Ա. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 353-442:

ղանկարչությունը մշտապես պահպանել են հայկական մշակույթին, հայկականությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկությունները: Ուստի եվրոպական գեղանկարչության սկզբունքների ընկալումը և արևելյան մշակույթի հետ համադրումը հայ մշակույթի համար ըստ էության ոչ այլ ինչ էին, քան եվրոպական ու արևելյան մշակույթների մեջ «սեփական մշակույթի ներքին կարողականությունների ծավալումը»<sup>44</sup>: Այս տեսանկյունից, ուրեմն, չենք կարող համաձայնել վերը նշված մոտեցումներից առաջինի հետ, քանզի ազգային մշակույթի և առհասարակ ազգապահպանության գործընթացում թերևս նույնքան մեծ կարևորություն ունի «մշակույթի վերակառուցումն ու թարմացումը»<sup>45</sup>, որքան և դարերով փոխանցված ավանդույթը<sup>46</sup>: Փաստորեն եվրոպական ու արևելյան մշակույթների ազդեցությանը ենթարկվելը պայմանավորված էր ժամանակների ու հասարակության զարգացման ներքին տրամաբանությամբ: Ահա թե ինչու հայ գեղանկարչության մեջ ընդհանուր առմամբ սկսում են գերիշխել աշխարհիկ թեմաները: Աշխարհիկ թեմատիկան իր հերթին նպաստում է նոր ժանրերի՝ դիմանկարի, բնանկարի ու նատյուրմորտի զարգացմանը: Թեմաների ու ժանրերի այս բազմազանությունը նոր հնարավորություններ է տալիս հայ արվեստին, գեղանկարչությանը՝ զարգանալու և ինքնադրսևորվելու:

Այսպիսով, 17-18-րդ դարերի հայ մշակույթի զարգացման տեսակետից կարևոր դերակատարություն են ունեցել նաև հայ վաճառականները: Առևտրական երկարատև ճանապարհորդություններից հետո վերադառնալով հայրենիք՝ հայ վաճառականները ձեռնամուխ էին լինում իրենց տեսած ճարտարապետական հոգևոր կառույցների նմանությամբ նոր կառույցների ստեղծմանը, դառնում հին եկեղեցիների վերանորոգման և նոր կառույցների պատվիրատուն ու մեկենասը: Ցանկանալով ընդօրինակել օտարների բարձրաշխարհիկ կենսակերպը՝ հայ վաճառականներն իրենց բնակավայրերում կառուցում էին շքեղ պալատներ, որոնք առանձնապես էին կահավորանքի պերճությամբ, որմնանկարների և մասնավորապես դիմանկարների առատությամբ: Ամենուր սկսում էր գերակշռել աշխարհիկ թեմատիկան, ուր հայկական մշակույթը ներկայանում էր արևմտյան ու արևելյան մշակույթների յուրօրինակ զուգորդություն-համադրությամբ:

**АЙАРПИ АГАХАНЫЯН – О культурной деятельности армянского купечества.** – В статье рассматривается вклад армянского купечества XVII–XVIII веков в развитие национальной культуры, главным образом архитектуры и живописи. Во время своих странствий купцы знакомились с условиями жизни и культурой различных народов. Возвращаясь на родину, они пытались укоренить здесь то, что понравилось им в дальних странах. Особенно это относится к сфере искусства. Именно купцы становились в Армении и диаспоре основными заказчиками произведений искусства и покровителями культуры. Поскольку часть армянских купцов ездила по торговым делам в Европу, а другая часть – в Азию, национальная культура усваивала как европейские, так и азиатские культурные ценности и традиции. Постепенно в армянском изобразительном искусстве, прежде почти

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 463:

<sup>45</sup> **Ա. Նալչաջյան**, էթնիկական հոգեբանություն, Եր., 2001, էջ 74:

<sup>46</sup> Այդ մասին տես, օրինակ, **Է. Լ. Մելքոնյան**, էթնիկական մշակույթը և ավանդույթը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1980, № 4, էջ 72-83:

всцело подчинённом религиозным мотивам, стали преобладать светские темы. Светская тематика, в свою очередь, оказала воздействие на становление новых жанров, таких, как портрет, пейзаж и натюрморт.

**HAYARPI AGHAKHANYAN – *On the issue of Armenian merchants' cultural activity.*** – The present paper illustrates the role of Armenian merchants in the 17-18<sup>th</sup> centuries in the Armenian culture, in the development of architecture and painting in particular. Not only did the Armenian merchants learn the lifestyle of other nations on their journeys, but their living conditions and culture as well. Upon their arrival home, they tried to introduce them into their own country.

Since the Armenian merchants, who had travelled through European and Asian countries, were the main culture supporters and consumers, the Armenian culture developed under the influence of European and Asian cultural values. At the same time, respective of the social status of the merchants, high life topics began to dominate art.

In this respect, high life depiction furthered the development of such new genres, as portrait, landscape and still life.